



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 փետրվարի 2020 թվականի թիվ 48 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ «Է.ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԱՌԱՎԱՔԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԸՆԹԱՑԻԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ԱՍԵՂՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հաշվի առնելով ՀՀ Տավուշի մարզպետին ուղղված մի շարք դիմում-բողոքները՝

ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի «Է.Մելքումյանի անվան Պառավաքարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրինության կողմից իրականացվող ընթացիկ աշխատանքների ուսումնասիրման նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝  
խմբի ղեկավար՝  
Մերուժան Հարությունյան - ՀՀ Տավուշի մարզպետի օգնական  
Անդամներ՝  
Արթուր Մելիքբեկյան - Իրավաբանական բաժնի փորձագետ  
Ռուզաննա Սաֆարյան - Կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար  
Հերմինե Դավթյան - Ներքին առևտրի բաժնի ավագ մասնագետ:
2. Աշխատանքային խմբին՝ 4-օրյա ժամկետում «Է.Մելքումյանի անվան Պառավաքարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում իրականացնել ուսումնասիրություն և հայտնաբերված թերությունների վերացման համար ներկայացնել առաջարկություններ:

ՄԱՐԶՊԵՏ՝

Հ.ՉՈՐԱՆՅԱՆ

11.02.2020

X

